ԸՆՏՐՎԵՑ ՖՐԱՆՍԻԱՅԻ ՀԱՅՈՑ ՆՈՐԱՍՏԵՂԾ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ

Հունիսի 22-ին Ֆրանսիայում, Փարիզի Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցու սրահում, տեղի ունեցավ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու Ֆրանսիայի նորակազմ թեմի թեմական առաջնորդի ընտրությունը: Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից հաստատված եռանուն ցանկից (Տ. Նարեկ եպիսկոպոս Շաքարյան, Տ. Նորվան եպիսկոպոս Զաքարյան, Տ. Կոմիտաս վարդապետ Հովնանյան) թեմի Պատգամավորական Ժողովը գաղտնի քվեարկությամբ առաջնորդ ընտրեց Տ. Նորվան եպիսկոպոս Զաքարյանին: Սրբազան Հայրը մինչ այդ պաշտոնավարում էր Լիոնի շրջանում:

Դեռևս անցյալ տարվա դեկտեմբերին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի Հայրապետական Սրբատառ Կոնդակով հռչակվեց Ֆրանսիայի հայոց թեմը: Ֆրանսիայի առաջնորդանիստը շարունակելու է մնալ Փարիզի Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցին: Թեմի ենթակայության ներքո, համաձայն կանոնադրության, գործելու են երկու՝ Հարավային Ֆրանսիայի և Ռոն-Ալփյանի փոխանորդությունները և 24 եկեղեցական համայնքներ:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ՀԱՍՏԱՏԵՑ ՖՐԱՆՍԻԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

Հունիսի 23-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը Հայրապետական գիր է ուղղել Ֆրանսիայի հայոց թեմի առաջնորդական տեղապահ, Արևմտյան Եվրոպայի Հայրապետական պատվիրակ Գերաշնորհ Տ. Գյուտ արքեպիսկոպոս Նազգաշյանին, Թեմական պատգամավորական ժողովի ատենապետ Կարպիս Ջրբաշյանին և Թեմական խորհրդի ատենապետ Գրիգոր Փափազյանին, որով հաստատել է Գերաշնորհ Տ. Նորվան եպիսկոպոս Զաքարյանի՝ հունիսի 22-ին տեղի ունեցած ընտրությունը՝ որպես Ֆրանսիայի հայոց թեմի առաջնորդ:

«*...Հայրապետական օրհնությամբ հաստատում ենք Գերաշնորհ Տ. Նորվան եպիսկոպոս Զաքարյանի ընտրությունը՝ որպես Ֆրանսիայի հայոց թեմի առաջնորդ, և այսու տնօրինում, որ հընթացս Սուրբ Պատարագի արարողության Ֆրանսիայի հայոց թեմի եկեղեցիներում հիշատակվի նորընտիր առաջնորդի անունը*»,- ասվում է Հայրապետական գրի մեջ: Նորին Սրբությունը նաև իր բարձր գնահատանքն է հայտնել Թեմական խորհրդի անդամներին և Թեմական պատգամավորական ժողովին՝ առաջնորդական տեղապահ Գերաշնորհ Տ. Գյուտ արքեպիսկոպոս Նազգաշյանի գլխավորությամբ թեմական առաջնորդի ընտրությունների կազմակերպական աշխատանքների իրականացման համար:

Ամենայն Հայոց Հայրապետը վստահություն է հայտնել, որ նորընտիր առաջնորդն արդյունավորությամբ իր ջանքերն ու տարիների փորձառությունը պիտի ծառայեցնի ի խնդիր Ֆրանսիայի հայոց թեմի զորացման և ֆրանսահայ համայնքի ազգային-եկեղեցական կյանքի բարգավաճման: Նորին Սրբությունը մաղթել է, որ Տերը եկեղեցաշեն և ազգանպաստ գործոց հարանոր հաջողություններ շնորհի Ֆրանսիայի հայոց թեմի բարեպաշտ զավակներին:

ՆՈՐԸՆՏԻՐ ԱՌԱՋՆՈՐԴԻ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ ԴԵՍՊԱՆԱՏՈՒՆ

Հունիսի 26-ին Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու Ֆրանսիայի թեմի նորընտիր առաջնորդ Տ. Նորվան եպիսկոպոս Զաքարյանը պաշտոնական այցելություն տվեց Հայաստանի Հանրապետության դեսպան Էդվարդ Նալբանդյանին: Սրբազան Հոր շքախմբի մաս էին կազմում Թեմական պատգամավորական ժողովի ատենապետ տիար Կարպիս Զրբաշյանը, Թեմական խորհրդի ատենապետ տիար Գրիգոր Փափազյանը, քարտուղարներ Տ. Գրիգոր աբեղա Խաչատրյանը, տիար Ժակ Փանոսյանը և գանձապահ Գեղամ Թորոսյանը:

Այցելության նպատակն էր հարգարժան դեսպանին ներկայացնել նորընտիր առաջնորդ Հորը և նորակազմ թեմի առաջիկա ծրագրերն ու աշխատանքները:

Թեմական խորհրդի ատենապետ տիար Գրիգոր Փափազյանը հակիրճ ներկայացրեց թեմի կազմավորման պատմությունը՝ հավաստելով, որ վերջինս ամեն ջանք պիտի գործադրի, որպեսզի ֆրանսիաբնակ մեր համայնքը համախմբվելով եկեղեցու շուրջ՝ լավագույնս դրսևորի իր կարելիություններն ազգային-եկեղեցիական կյանքից ներս:

Այնուհետև Հայաստանի Հանրապետության դեսպան Էդվարդ Նալբանդյանը բարի գալուստ մաղթեց բոլորին: Շնորհավորելով նորընտիր առաջնորդին՝ նա իր ուրախությունը հայտնեց Տ. Նորվան եպիսկոպոս Զաքարյանի ընտրության համար՝ շեշտելով, որ Սրբազանի կատարած գործերն արդեն խոսում են իր մասին: Պարոն դեսպանը նաև նշեց, որ անձամբ Հայաստանի Հանրապետության դեսպանի հանգամանքով պատրաստ է զորակից և աջակից լինելու Հայաստանյայց Առաքելական Եկեղեցուն՝ ի մասնավորի Ֆրանսիայի նորակազմ թեմին:

Հանդիպման ընթացքում արծարծվեցին նաև Ֆրանսիայում Հայաստանի տարվա միջոցառումներն, ինչպես նաև ֆրանսահայ համայնքի կյանքին վերաբերող մի շարք հարցեր:

ԹԵՄԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅՈՒՆ